ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/115

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 23.05.2020թ. թիվ 26/26-1/7670-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 14.05.2020թ. թիվ 01/61-7797 գրության հիման վրա, 23.05.2020թ. թիվ 26/26-1/7670-2020 գրությամբ նախաձեռնել է «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/115 ընթացակարգի շրջանակներում 03.06.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.05.2020թ. թիվ 01/61-7797 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 և N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում ներկայացվել են որակավորման ապահովման, իսկ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի շրջանակներում՝ նաև պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ:

Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է բանկային երաշխիքների իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքները չեն թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում են կեղծ փաստաթղթեր:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով, որ Ընկերությունը մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել ՀՀ օրենսդրությանը, ուստի Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանիորեն լուծվել են վերոնշված պայմանագրերը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն:

Ամփոփելով՝ Պատվիրատուն առաջարկել է, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի ի-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով, Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/115 ընթացակարգի շրջանակներում 03.06.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/115 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/115 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020 թվականին կնքվել են N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 և N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրերով ծառայությունների գնման պայմանագրեր:

2. «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0181.20 և O.AB.100.12CIB.PIED.1.0182.20 բանկային երաշխիքները՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար, իսկ 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0184.20 բանկային երաշխիքը՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար:

3. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն 11.05.2020թ. Երևանի քաղաքապետին ուղղված գրությամբ հայտնել է, որ բանկը պարզել է, որ Երևանի քաղաքապետարան են ներկայացվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական ձևաթղթին նմանեցված ևս երեք երաշխիքներ, որոնք իրականում երբևէ չեն թողարկվել և երբևէ չեն տրվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից և ամենայն հավանականությամբ դրանք կեղծվել են անհայտ երրորդ անձի կամ անձանց կողմից, ինչի վերաբերյալ բանկի համապատասխան աշխատակիցները դիմել են իրավապահ մարմիններին: Նշված երաշխիքներն են՝ 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0181.20 և O.AB.100.12CIB.PIED.1.0182.20 բանկային երաշխիքները և 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0184.20 բանկային երաշխիքը՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար:

4. Երևանի քաղաքապետարանը Ընկերությանն ուղղված 14.05.2020թ. թիվ 01/61-7799 ծանուցմաբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 և N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում ներկայացվել են որակավորման, նաև պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ: Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է բանկային երաշխիքների իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքները չեն թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում են կեղծ փաստաթղթեր:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ Կատարողը մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել ՀՀ օրենսդրությանը, ուստի Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանիորեն լուծվել են վերոնշված պայմանագրերը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 23.05.2020թ. թիվ 26/26-1/7670-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի՝ 14.05.2020թ. թիվ 01/61-7797 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:*** Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին***:

Նույն պարբերության համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝ գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերջնաժամկետից, ներառյալ՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման***

<u>ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում.</u>

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020 թվականին կնքվել են N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 և N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրերով ծառայությունների գնման պայմանագրեր:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0181.20 և O.AB.100.12CIB.PIED.1.0182.20 բանկային երաշխիքները՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար, իսկ 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0184.20 բանկային երաշխիքը՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն 11.05.2020թ. Երևանի քաղաքապետին ուղղված գրությամբ հայտնել է, որ բանկը պարզել է, որ Երևանի քաղաքապետարան են ներկայացվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական ձևաթղթին նմանեցված ևս երեք երաշխիքներ, որոնք իրականում երբևէ չեն թողարկվել և երբևէ չեն տրվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից և ամենայն հավանականությամբ դրանք կեղծվել են անհայտ երրորդ անձի կամ անձանց կողմից ինչի վերաբերյալ բանկի համապատասխան աշխատակիցները դիմել են իրավապահ մարմիններին: Նշված երաշխիքներն են՝ 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0181.20 և O.AB.100.12CIB.PIED.1.0182.20 բանկային երաշխիքները՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար, ինչպես նաև 18.02.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.1.0184.20 բանկային երաշխիքը՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար:

Երևանի քաղաքապետարանը Ընկերությանն ուղղված 14.05.2020թ. թիվ 01/61-7799 ծանուցմաբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 և N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում ներկայացվել են որակավորման, նաև պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ: Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է բանկային երաշխիքների իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքները չեն թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում են կեղծ փաստաթղթեր:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ Կատարողը մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին

որոշումը չի համապատասխանել ՀՀ օրենսդրությանը, ուստի Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանիորեն լուծվել են վերոնշված պայմանագրերը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն:

Այսպիսով՝ Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը սահմանում է, որ ***այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը,*** եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Ամփոփելով վերը նշված փաստերը և դրանք համադրելով գործում առկա փաստաթղթերի հետ՝ գտնում եմ, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական գրությունը՝ ուղղված Երևանի քաղաքապետին՝ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքների կեղծ լինելու վերաբերյալ, և ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով, լուծելով Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 և N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրերով պայմանագրերը՝ գործել է իրավաչափ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն, ներկայացնելով համապատասխան բանկի կողմից չթողարկված բանկային երաշխիքներ, թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 և N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրերով պայմանագրերի միակողմանի լուծմանը, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 21.05.2020թ. թիվ 26/26-1/7508-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ